

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ՍԵՋ

ՀՀ ԳԱԱ. ակադեմիկոս Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հատուկ անունների (տոհմանունների, անձնանունների և տեղանունների) ստուգաբանության կրկնվող բառերի հայտնի է, սակայն լուրջ հետազոտության առարկա չի դարձել մինչև օրս: Պատճառը, թերևս, նրա, այսօրվա սերսիսներով ասած, «մոռոգրգրական» կամ «կեղծ» ստուգաբանական բնույթն է, որը հետազոտողներին չի գայթակղեցրել սպասելի էական արդյունքներով: Իրանյա մասկարգային հետազոտությունը, սակայն, ցույց է տալիս, թե որքան խլուր է այդ կարծիքը, մասնավորապես Խորենացու ներաշխարհը և աշխատաստեղծ ու հետազոտական մեթոդներն ըմբռնելու տեսակետից:

Իմ հետազոտությունն այդ բնագավառի նկատմամբ սկսվեց նախարարական ստուգաբանության, որոնց մի ստվար մասը ենթարկվել է «հասանհոր ստուգաբանությանը: Եյնուհետև, ինձ համար պարզ դարձավ, որ հետազոտել նրա ստուգաբանությունների այդ մասը՝ անջրպետված մյուսներից, անհետակար է: Ուստի և ձեռնարկեցի նշված կրկնվողի ամբողջական, տոտալ հետազոտությունը, որի արդյունքներն էլ ներկայացված են ներկա աշխատության մեջ:

Սովսես Խորենացու առաջարկած ստուգաբանությունների ընդհանուր թիվը, իմ մոտեցման համաձայն, 84 է: Շրջանցված են այնպիսի տեղանուններ, ինչպիսիք են «Հայկաշեն», «Տիգրանակիրտ», «Արշակատն» և այլն, քացառությամբ Սրուանդավանի, որը Խորենացու մոտ առանձնանուն է (տևս ստորե), ինչպես և այնպիսի նախարարական տոհմանուններ, ինչպիսիք են «Մոկացի», «Գողթնեցի», «Ակէացի» և այլն, քանի որ սրանց ստուգաբանելի և ստուգաբանիչ տարրերը համընկնում են:

Ստորև տրվում է ստուգաբանությունների ցանկը՝ բաժանված երեք խումբի՝ ստուգաբանություններ ըստ իմաստի, ըստ անձնանվան և ըստ ցեղանվան: Յուրաքանչյուր խումբ իր հերթին բաժանվում է երեք մասի՝ տոհմանուններ (նախարարական), անձնանուններ և տեղանուններ:

Հերթականությամբ՝ 1-ից մինչև 84 թիվը, ներկայացված են ստուգաբանական զույգերն իրենց ստուգաբանվող և ստուգաբանող տարրերով: Յուրաքանչյուր թիվն կցված է ծանոթագրություն, որը ներածվում է նույն թվով, սակայն փակագծերի մեջ առած: Խաչաձև հղումներն արված են ըստ այդ թվերի: Ծանոթագրությունները սկսվում են Խորենացու համապատասխան հատվածի (հատվածների) մեջբերմամբ: Մեր հավելումներն այստեղ նվիրված են մեծ մասամբ ստուգաբանող տարրի առանձնահատկություններին, քանի որ ստուգաբանվող տարրը, որպես կանոն, խնդիրներ չի հարուցում: Ըստ այդմ, ճնշող մեծամասնությունը կազմող սովորական (պարզ) ստուգաբանությունների կողքին առանձնանում են «թաքնված», «երկդիմի», «թարգմանական» և այլ տիպի ստուգաբանություններ, որոնց բնույթը բավականաչափ պարզաբանվում է նույն ծանոթագրություններում: Տրվում են Անանուն պատմիչի (Սեբեոսի) մոտ առկա՝ մեր խնդրո առարկա ստուգաբանությունների զուգահեռները: Ստուգաբանող անձնանունների կապակցությամբ, ըստ հնարավորության, տրվում են լրացուցիչ տեղեկություններ այն դեպքերում,

և՛ թիվը անկախ է միայն խորհրդային մտա կամ և՛ թիվը օտար ծայրում ունեն
և կամ ծայրումն անհայտ է: Անհրամեշտ գեղեցիկում այս կապակցությունը
արվում են համապատասխան գիտական գրականության հղումներ:

Առաջին՝ ըստ իմաստի ստուգարանությունների խմբի առաջին ենթա-
խումբը բնագրվում է աշխարհի նախարարական առհամանուններ, որանք ստու-
գարանված են ըստ առհամի՝ որոշումներում գրագեղեցիկում պաշտոնի կամ էլ ըստ
առհամի նախահար անձնական հատկությունների՝ Գրանք են:

1. Արժույթի — «արժույթ ունի»
2. Գնունի — «գինի ունի»
3. Սպանդունի — «ի վերայ գեներանաց»
4. Ձիւնական — «ձիւնակիր»
5. Հատունի — «բազմակիրք և բազմակայր»
6. Գիմարսեան — «գիմարց կէտ»
7. Ամասունի — «ամաս» (պարսկերեն՝ «եկտայ»)
8. Անդեղեայ, Անդեղ տուն — «վտան ժահագիմութեան»

(1) II, 7. «Ան Արժույթիս գիտեմ ոչ Արժույթիս, այլ արժույթ ունիս,
որք արժույթս առաջի նորս (Վաղարշակ արքայի — Գ. Ս.) կրկին», խորհրդային
«Պատմություն» մեջ հիշատակվում է միայնվում է բնագրվող առհամանուն
նաև մի այլ ստուգարանություն, որի, ինչպես և որոշ այլ հարակից խնդիր-
ները մասին ասես ուտրի:

(2) II, 7. «Գիտեմ և գնունիս գինի ունիս, որ պարժանի թագաւորին
պատրաստէր զբազմակիրքն. որ սրանչէր իմն գիտեայ եղև ըստ պրծուն և
անունն. բանդի պատրաստէր զբազմակիրքն արքայի յրնտիր և ի համեղ գի-
նեաց, ունէր և կոչումն անտանն Գին. բնդ որ կարի գուարձացեայ, ասեն,
Վաղարշակ, կարգէ ի թիւ նախարարութեան ազգայ»:

Այսակերպ ուղղորդության արժանի է Գնունի առհամանուն՝ խորհրդային առա-
ջարկած կարծես թէ կրկնակի ստուգարանությունը՝ «գինիս բառով և «Գին»
անվամբ: Նախապատասխաններ նա ասիս է «գինուն», «գին» ասարեակր
վերածերով գաղեղատեան պատմության: Պետք է ասել, սակայն, որ բերա-
կանությունն աստուգարանության շրջանակներին, ավելի կհարմարվեր «Գինը»
որի Ն ձայնավորը թէր հոլովներում և բարդ բառերի կազմում բնագրակ է
սղվելու, ինչպես և կա «Գնունի» առհամանուն մեջ, մինչդեռ «գինիս» բառի
առաջին վանկի ի-ն, բնականաբար, չի սղվում:

Ըստ Հ. Աճառյանի (ՀԱԲ, I, 471), Գին անունը միայն խորհրդային է
հիշատակում, ուստի և հեղինակի կարծիքով այն ստարգված է Գնունաց
նախարարական առհամի անունից:

Գնունի առհամանուն կապակցությունը հիշատակելի է և «Գնէլ» անձ-
նանունը: Թեև խորհրդային այն անմիջական մասնակից չի դարձնում առհ-
մանուն ստուգարանությանը, բայց և անպակաս նրա մոտ այդ անվան կրեք
կրողներն էլ (II, 19, III, 23, III, 24—25) առնչվում են այդ առհամին, ըստ
սրում, գրանցից մեկը հանդես է դալիս որպես արքունի սակառուպես:

(3—5) II, 7. «Ասեմ և զՍպանդունիս ի վերայ գեներանաց, և Հատու-
նիսդ՝ բազմակիրք և բազմակայր, յաղաղս ի մայրիս բնակելու: Եւ եթէ առ
ցոփս ինչ ոչ ունիցիս՝ և զՁիւնականսդ՝ ամատանոցաց պահակս և ձիւնակիրս,
և յառաջագիմութիւնէ ազատացեայս որդէս բնատանիք թագաւորաց»:

Այս շարքի առհամանունների նկատմամբ խորհրդային կիրառած ստուգա-
բանական մեթոդների մեջ որոշ տարբերություն կա: Եթե երրորդ անգամի՝
«Ձիւնական» առհամանունն նկատմամբ կիրառված է նույն մեթոդը, ինչ որ
սեխանք Արժույթի և Գնունի առհամանունների դեպքում, այսինքն ստուգաբա-
նող բառը անմիջականորեն պարունակվում է ստուգաբանվող բառի մեջ,
այսպէս առաջին երկու դեպքերում ան (ստուգաբանող բառը) ստուգաբանու-
թյան բացատրության մեջ փոխարինված է իրեն մոտավորապես համարժեք

մեկ այլ բառով: «Սույանդունիներիս դեպքում դա «սպանդին» փոխարինող «դենարանն» 1, իսկ Հաունիների դեպքում՝ «հաու»-ին փոխարինող «բազն»։ Այս ախպի արտահայտությունները մենք նշեցինք «Թաքնված ստուգաբանություն» բառերով: Ի դեպ, Գահնամակում առկա է Հաունի տարբերակը, որին Խորենացին գերադասել է Հաունին, հավանաբար, որպես ավելի գյուրսյամբ ստուգաբանելի «հաու» բառով:

(6) 11, 47. «Դիմաքսեան, քանդի... զկէս դիսաց սուսերաւ ի վայր բերին ի վերայ Արաաշխսի»:

(7) 11, 57. «...ասեն եկեալ դազդն Ամատունեաց ի կողմանցն արևելից Արևաց աշխարհին... և անուանին Ամատունիք, որպէս թէ Եկք»:

Այստեղ մենք հանդիպում ենք (3) և (4) ստուգաբանական դեպքերին հատուկ սարբերակից առանձնացող մեկ այլ սարբերակի, որը կոչեցինք «Թարգմանական ստուգաբանություն»: «Եկք» բառով Խորենացին այստեղ թարգմանում է պարսկերեն «ամատ» — «եկավ» բառը, մի բան, որ ի հայտ է գալիս ստորե մեջբերվող (81) ստուգաբանության դեպքում ևս:

(8) 11, 8. «...զայր խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաբիթ, խորակն և դժնահայեաց... Տորք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին Անգեղեայ... յերեսացս անպիտանութենէ կոչէ (Վաղարշակ—Գ. Ս.) զանուն ազգին Անգեղ տուն»:

Սա «Թաքնված ստուգաբանության» դեպքերից է, երբ Խորենացին «անգեղ» բառը բացատրության մեջ փոխարինել է «ժահադիմութիւն» բառով, որը դեռ ուղեկցույս է նախորդող «կոպտարանձն և տափակաբիթ, խորակն և դժնահայեաց» որակումներով: Այս ստուգաբանության կապակցությամբ հատկապես նշելի են «Անգեղի» վերաբերյալ Անանուն պատմիչի տեղեկությունները: Այդ անունը նա հատկացնում է Բաղրատունիների նախահայր Բաղարատին. «Որդիքն Բագարատայ ժառանգեցին... Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բաղարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչէին»¹: Անանունն, ուրեմն գիտեալ այն փաստը, որ Աստվածաշնչում Անգեղը հանդես է գալիս որպես «բարբարոսների» աստվածություն: Խոսքը 4-րդ թագ. Ժէ, 30-ում «և արք Քոթայ արարին զԱնգեղ» արտահայտության մասին է, որին համարժեք նախադասության մեջ հունական բնագիրը հիշատակում է ներգալիս՝ բաբելական ստորգետնյա աստծուն: Այն, որ Խորենացին շրջանցել է իր տեսադատում առկա Աստվածաշնչի ցանկունը, ինչպես և նրա կապը Բագարատի հետ, գուցե կարելի է բացատրել այն հանգամանքով, որ նա այդ տեղեկության համար Տորքի առասպելի մեջ հենակետ չի գտել, կամ գուցե նա այդ արել է Բաղրատունիների ոչ-հայկյան լինելու իր տեսակետը (1, 22) անսասան պահելու նպատակով:

Առաջին խմբի հաջորդ, երկրորդ ենթախմբին են պատկանում դարձյալ ըստ իմաստի, սակայն արդեն մի շարք անձնանունների ստուգաբանություններ:

Դրանք են՝

9. Սանատրուկ — «տուրք Սանոտայ»
10. Աբգար, Աբգարոս — «աւագ այր»
11. Կամսար — «կամ սար» (պարսկ. «կես գլուխ»)
12. Մոգպաշտէ — «աշակերտ մոգի»
13. Տուր — «տայ» («մատնել»)
14. Հրաշեայ — «պայծառատէս և բոցակնադոյն»
15. Սոտանուէր (մականուն) — «ձոնեայ ի սօսիսն»
16. Սլաք — «որսայ զքօշսն»

¹ Պատմութիւն Աբելոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի. Երևան, 1979, էջ 51:

(9) 11, 36. «...կոչեցաւ Սանաարուկ, ի դայկիկն իւրոյ (Սանոա ան-վամբ—Գ. Ս.) դանսւանսկոչութիւնն տոեալ, որպէս թէ տուրք Սանսաւալ»:

Այս ստուգարանական օրինակը «Երկղիմի» է՝ նրա ստուգարանվող տարրը Խորենացիի բաժանել է Երկու մասի՝ Սանաա-արուկ, որոնք նա առան-ձին ազանձին է ստուգարանում: Բացի այդ, այն կարող էր ներկայացվել և մեր Երկրորդ (բոս անձնանունների ստուգարանութան) խմբում, բանի որ այն հենվում է, բացի -արուկ -«տուրք» իմաստային առնչությունից նաև Սա-նոա անձնանվան վրա: Ըստ Աճառչանի (ՀԱԲ, IV, 396) այս անվան ծագումն անհայտ է, այն հանդիպում է միայն մեկ անգամ, Խորենացու մաս: Ստու-գարանությունն ունի նաև առասպելական մաս, որը կրնա արկվի ստորև:

(10) 11, 26. «Այս Արցաբոս կոչըր ասաց այր, վասն տոուել հեզութեանն և իմաստութեանն, որում չետոյ և տիրն»: Այստեղից հետևում է, որ իր այս անունը Արցաբոս, բոս Խորենացու, ստացել է հասուն տարիքում, այսինքն վերանվանվել է: Ակզնական անունը Խորենացին չի հայանում:

(11) 11, 87. «Այս Կամոար... նահատակեալ առ հարբն ի պատերազ-մանս... հարկանի ումեմնէ սակերը զգլտիսն և վերացուցեալ մասն ինչ յոս-կերէ սկուստակին, բժշկեալ ի գեղաց, պակաս գլտով բոյսութիւն զպաթանն անուանեցաւ Կամոար այնը ազազաւ»:

Կամ օտար—պարսկերեն նշանակում է կես կամ բիշ գլտիս, որով այս գեղոր սասնում է «թարգմանական ստուգարանութան» տեսք: Տես նաև (7) և (81):

(12) 11, 48. «...աշակերտ մոզի ուրումն Երազահանի, որ յայնմ սակս և Մոզդաշալ անուն կարգային»:

Ստուգարանությունը «Երկղիմի» է՝ ստուգարանող տարրի մի մասը («մոզ») անմիջականորեն տակա է ստուգարանվող անվան մեջ, իսկ մյուս մասը՝ «աշակերտը», դասում է այն «թարնված ստուգարանությունների» շարքը:

(13) 11, 47. «...սորա (Արտաշեսի—Գ. Ս.)... սերեալ ազգ և զորդիսն Տուրալ... յանուն հորն իւրեանց Տրունիս, ոչ վասն արութեան ինչ զործոյ, այլ միայն վասն քսութեան հօր նոցա, զոր առնէր ի տանն արքայի (Նր-վանդի—Գ. Ս.) առ Սմբատ»:

Իմ ենթադրություններ, այս ստուգարանությունը, հավանաբար և ողջ այս տարրերիակ զրվազր, հեցած է «քսութիւն-Տուր» յառերի Խորենացու զի-տած իմաստային կապի վրա, այսինքն՝ «թարնված ստուգարանություն» է: «Տուր» բառն նմանում վերադրվում է նաև «մատնել զայլս կամ զանձն» իմաստը, թեև ոչ կոնկրետ «քսութիւն», «մատնութիւն», այլ ավելի շուտ «զատապարտման» առումով (օր. «զլեղէոնսն... յանգնողն տայ», «տայ ի բանս» և այլն): Ըստիս, որեմն, այստեղ կարող է կիրառված լինել Խորե-նացիական մասովոր համարժեքի մեթոդը («թարնված ստուգարանություն» տես (3), (4): Ը. Աճառչանը (ՀԱԲ, V, 173) այս անվան կապակցությունը նշում է. «Կամ իրան. Մուր-օբաջ», կամ հյ. «տուր» բառից իբրև կրճատ ձև»:

(14) 1, 22. «Սա Հրաշեայ կոչի վասն առուել պալծատատէս և բոցակնա-զուն իմն լինելոյ»: «Թարնված ստուգարանություն» է:

(15) 1, 20. «...Անուշաւանն Սոսանուի: Քանզի ձօնեալ էր ըստ պաշ-տամանաց ի սօսիսն Արամանեկայ որ յԱրամաիր»:

Ստուգարանությունը «Երկղիմի» է, ըստ որում երկրորդ մասը («նուէր-ձօնեալ») արված է «թարնված ստուգարանություն» մեթոդով:

(16) 11, 8. «Զգծնեայ Սյաթն... կարգէ (Վաղարշակը—Գ. Ս.) սակաւ արամբք պահել զյեառնն և որսալ զքօշն. որք անուանեցան Սլիունիք»:

Սյաթ անվան ստուգարանությունը, եթե միայն այն առկա է, հեցած պի-տի լինի «թարնված ստուգարանություն» մեթոդի բավական լայն ըմբռնման և կիրառման վրա:

Ստուգաբանությունների առաջին խմբի երրորդ ենթախմբին են պատկանում մի շարք ըստ իմաստի ստուգաբանվող տեղանուններ: Դրանք են.

- 17. Հարթ—«հարթ» («հարթեր»)
- 18. Գերեզմանք, Գերեզմանակեր—«ուր... անկառ Բել»
- 19. Յրօնք—«բաժանումն»
- 20. Բազարան—«բազին»
- 21. Բազնայ ալան, Բազալան—«բազին»
- 22. Երուանդավտն—«վանկայ զերուանդ»
- 23. Որթք—«որթ» (կողով)
- 24. Մննդոց—որսի կենդանիների «ազդ», «բազմություն»
- 25. Աշտիշատ—«շաշտից տեղիք»

(17) I, 10. Հայկն «անուանէ զանուն լեռնազաշտին Հարթ, այս ինքն թէ հարթ են աստէն բնակեալք՝ ազգի տանն Բորդոմալ»:

Նույն ստուգաբանությունն առկա է նաև Անանունի մոտ. Հայկը «կոչեցաւ անուն զաշտին այնորիկ Հարթ, յանուն հարցն» (էջ 48) և «Արամենակր բնակեցաւ անդէն յառաջնումն զաւառին, զոր կոչեցին յանուն հարց իւրեանց՝ Հարթ» (էջ 50):

(18) I, 11. «Իսկ զբուրն, ուր քաջամարտիօքն անկառ Բել՝ անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանակեր»:

Սա ես «Թաքնված ստուգաբանություն» օրինակ է. «գերեզման» բառը փոխաբերված է «բուրն, ուր անկառ Բել» մոտավոր համարժեքով: Աչքի է ընկնում նաև այն հանդամանքը, որ Խորենացին հին «Գերեզմանք» անվան կապրին բերում է նաև իր ժամանակի «Գերեզմանակեր» անվանաձևը:

(19) I, 6. Սեմը «յանուն տեղոյն ուր բնակեցաւ՝ կոչէ Յրօն զի անդ զառեցին սկիզբն եղև բաժանելոյ սուրբ նորա ի նմանէ»: «Թաքնված ստուգաբանություն» տիպական օրինակ է, որում «բաժանվելը» ծառայեցված է որպես «ցրվելու» համարժեք:

(20—21) II, 40. «Բազարան, այս ինքն թէ ի նմա զբազնաց յօրինեալ է զկազմութիւն»: Նշենք, որ «բազինը» պահանջում էր ավելի շուտ «Բազնարան» ձևը: Այս ստուգաբանությունն ունի, մի քանի ուրիշների նման, իր «երկվոյակը» ի դեմս (21)-ի, որի կապակցությամբ Խորենացին գրում է (II, 66). «...վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզմանն եղբորն իւրոյ Մաժանայ քոմապետի ի Բագնացն աւանի, որ ի Բագրևանդ դաւառի, բազին ի վերայ զգերեզմանին շինեալ», և մեկ ուրիշ տեղ (II, 77). «...զհուրն որմզղական որ ի վերայ բագնին, որ ի Բագաւան»:

(22) II, 46. Արտաշեսը անվանում է «զտեղի ճակատան՝ Երուանդավան, որ կոչի մինչև ցայսօր ժամանակի. այս ինքն եթէ յայնմ տեղոջ վանեղս զԵրուանդ»: Հետևելով ժողովրդական ստուգաբանության իր մեթոդին, Խորենացին այստեղ «-վան» մասնիկը բխեցնում է «վանել» բայից: Իրականում, սակայն, գործ ունենք կամ իսկապես «վան» բառի հետ, որը կտար տեղանվանը «Երվանդի օթևան» իմաստը (հմմտ. Շահապիվան), կամ էլ «աւան» բառի հետ (հմմտ. Արշակաւան, Վաղարշաւան և բազմաթիվ այլ): Վերջին դեպքում պիտի ենթադրենք Խորենացու կատարած ուղղագրական միջամտություն, որով նա Նրուանդաւանը վերածել է Նրուանդաւանի՝ իր ստուգաբանությունն իրականացնելու էպատակով: Նրա ստուգաբանությունների շարքում, կարծես, հանդիպում ենք մեկ այլ նմանօրինակ դեպքի՝ (82), որտեղ առկա է «Մարաղ մարդ»-ը թեև «Մարանց մարդի փոխարեն»: Թվում է թե Նրուանդաւան տեղանունը իրականում պիտի զար լրացնելու Խորենացու մոտ ներկայացված Երուանդաշատ և Երուանդակերտ «-շատ»-ով և «-կերտ»-ով վերջավորվող տեղանունների յուրյոր մի երրորդ անդամով՝ «-աւան» վերջավորություն պարունակող տեղանվամբ:

(23) III, 27. Արշակաւանի ավերման ժամանակ հայոց նախարարներն առանձնացրել էին ծծկեր տղաներին՝ դերեվարելու նպատակով: «Զորս թափեալ մեծին ներսիսի, հրամայեաց կրել որթովք ի դոմ մի, և դարմանս և

սնուցսդս նույն կարգեաց. որք յեռայ տանայեալ անուանեցան Որքի աշ- նորիկ ազագաս»:

(21) 11, 11. Երվանդ թագավորը «անկէ և մայրի մեծ... արգելլով ի ներքս այժեմունս երազունս, և դեղանց և զկզկերուաց ազգ, և ցիտս և վա- րագս, որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանասան... Եւ անուանէ զանասան՝ Կննդոց»:

Իմ կարծիքով այստեղ ևս առկա է «թարնված ստուգարանության», «յայնայրած» կիրառման (առև Սյար (16) տարրերակ, որում ստուգարանոց տարրն է Աստվածաշնչի «Իկրք ձննդոցը»: Խորենացուն կարող էր հենարան ծաստելի ալս անաստում նույի ստուգանի նման այլևայլ կենդանիների ժողո- վամբը:

(25) 11, 12. «...իսկ զՀերակելեայն տոնադատկերն... զՎաճագն իրեանց (Վաճանիներն—Գ. Ս.) վարկանելով նախնի՝ կանդնեցին ի Տարօն, լիբեանց սեղձական զիւզն յեշտիշատ...»։ այնուհետև՝ 11, 14. «Բայց Աբրողիտեայ զպատկերն, իբրև Հերակելեայ տարփատորի, տո նորին պատկերին Հերակելեայ րամսյեաց (Տիգրան Միջինը—Գ. Ս.) կանգնել յաշտից աեզիտն...»:

Խորենացին անմիջականորեն չի նշում Աշտիշատ—«յաշտից աեզիտն» («զուհարերությանների աեզեր») ստուգարանական փաստը, բայց այն միան- դաման ախներ է:

Ստուգարանությանների երկրորդ, առավել բազմանգամ խմբում միա- վորվում են ալնայիսի առճմանուններ, անձնանուններ և աեզանուններ, որոնք ստուգարանված են բառ նրաց մեջ իսկապես պարունակվող կամ նրանց վերագրված անձնանունների:

Այստեղ ևս ունենք երեք ենթախումբ, որոնցից առաջինը զարձայ կող- մում են նախարարական առճմանունների ստուգարանությանները: Դրանք են.

- 26. Կազմեան—Կազմա
- 27. Խոսխոսունի—Խոս
- 28. Մանատուգեան—Մանատաղ
- 29. Բզնունի—Բազ
- 30. Սիսական (ազգ)—Սիսակ
- 31. Բազրատունի—Բազարատ
- 32. Ասուկենեան—Ասուան
- 33. Սիկունի—Սյաք
- 34. Մանդակունի—Միանդակ
- 35. Աբեղեան—Աբել
- 36. Գարեղեան—Գարաղ
- 37. Վաճունի—Վաճագն
- 38. Վարամունի—Վարամ/Վարմ
- 39. Տունի—Տուր
- 40. Ռոփսեան—Ռոփի
- 41. Մամիկունեան, Մամդունեան—Մամդան
- 42. Կամսարական—Կամսատ
- 43. Զարեհաունեան—Զարեհ

(26) Այս ստուգարանական զույգը համատեղ չի հիշատակվում, առ կողմյան նախարարական տունն առանձին (II, 1, 8) և նրա նախահայր Կազմոսը՝ առանձին (I, 10, 11):

Հուճական զիցարանության մեջ Կազմոսը փյունիկեան արքայազն է՝ Դանական Թեշե ռազարի հիմնադիր և փյունիկեան այրուրենի հիմքի վրա Դանարեն այրուրենը ստեղծող: Խորենացին պետք է որ տեղյակ լինեք նրա մասին: Մյուս կողմիս «Կազմոսի առնք»՝ նրա ախույթը, համընկնում է ստուգարանի ազդյունների Կազմոսի երկրի հետ ոչ միայն հնձման աեսակե- անց, այլև իր աեղադրութամբը:

(27—29) 1, 12. «Իսկ նորս (Արամանյակի—Գ. Ս.) թողիայ զերկուս լնդարո իտց, զԽոս և զՄանատաղ... ի կոչեղեայն Հարք, և զորդի Մանա-

ազայ ղրեզ ...ն: Ի սոցանէ ասեն լեայ ղնահապետութիւնս Մանաւազեան և Բղնունեաց... Իսկ Խոռն Ի կողմանս հրսիսոյ բաղմանայ... և Ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց»:

Խոռ անվան ծագումն, ըստ Աճառյանի, անհայտ է (ՀԱԲ, II, 528), Բազ անունը նա համեմատում է «բազէ» թռչանվան հետ (ՀԱԲ, I, 360): Այս երկու անունը հանդիպում են միայն Խորենացու մոտ՝ մեկական անգամ: «Մանաւազ» անունը իրանական ծագում ունի:

(30) I, 12. «Աստ բնակեալ Ախսակ... ղաշխարհն կոչէ իւրով անուամբ Սիւնիք. ալ Պարսկը յստակազոյնս ես Սիսական կոչեն: Ի սորա ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ... դտեալ արս անուանիս՝ տեարս աշխարհին կարդէ, որ է Սիսական ազգ»։ Սիսակ անվան ծագումն անհայտ է (ՀԱԲ, IV, 528), հանդիպում է Փարպիցու մոտ:

(31) II, 3. Վաղարշակը «նախ և առաջին փոխարէն բարեաց հատուցանելով տունն զօրաորի և իմաստնոյ, որ Ի Հրէիցն՝ Շամբատայ Բաղարատ. ասլով նմա իշխանութիւն ազգալ թագադիր լինել Արշակունեաց, և որ Ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել կոչմամբ յանուն նորա Բաղարատունի»:

Բաղարատ անունը իրանական ծագում ունի:

(32) I, 31. «Եւ սորա (Վահագնի—Գ. Ս.) են զարմբ Վահունիք. Ի սորս կրտսեր որդոյն Առաւանայ Առաւննանք»:

Աճառյանը «Առուան» անվան ծագումը համարում է անհայտ (ՀԱԲ, I, 205): Ըստ Զահուկյանի այն իրանական ծագում ունի²:

(33) II, 8. «...զգծնեայ Սլաքն... կարդէ (Վաղարշակը—Գ. Ա.)... պահել ղլեանն և որսալ ղխօշսն. որք անուանեցան Սլկունիք»:

Եվ այսպէս, Սլկունի տոհմանու՝ ը Խորենացին ստուգարանում է Սլաք (16) անձնանունով: Սլուս կողմեց Խորենացին ունի «Սլուկ (տարբնթերց՝ Սլուկ), նահապետ ազգին Սլկունեաց» (II, 84), որը կարծես ավելի հարմար կլիներ տոհմանունը ստուգարանելու համար: Ըստ Աճառյանի, այս անվան ծագումն անհայտ է, կա միայն Խորենացու մոտ (ՀԱԲ, IV, 537): Ա. Փերիխանյանի կարծիքով Սլուկը Աելովկոսն է (Σελωκόσ), որ անցել է Հայաստան արամեական SLWK-ի միջնորդությամբ³: Չի բացառվում նաև, որ այն Սլկունի տոհմանվան ծնունդ է: Համեմատության համար նշենք «Գնունի-Գնել» (2) և «Աբեղեան-Աբեղոյ» (35) Խորենացու մոտ շկայացած ստուգարանությունները:

(34). Սլկունի-Սլաք ստուգարանական գույզը բնութագրելով Խորենացին ավելյացնում է. «Այսպէս և և նոյն իրս և ղՄիանդակն անդաւանալի. և Ի սմանէ Մանդակունիք» (II, 8): Այստեղ պարզ չէ, թե ինչ նկատի ունի Խորենացին ասելով՝ «Այսպէս և Ի միևնոյն իրս», և թե արդյոք նա չի՞ բխեցնում «անդաւանալի» (հաստատուն, անդիջող) որակումը Միանդակ անձնանունից, որի ծագումն Աճառյանն անհայտ է համարում (ՀԱԲ, III, 330), բայց որն իր կերտվածքով իրանական է թվում: Փաստորեն այդ անունը միայն Խորենացին է հիշատակում, քանի որ Սամուել Անեցու մոտ եղած հիշատակությունը սոսկ կրկնում է Խորենացուն:

(35—36) II, 7. Վաղարշակը կարգադրում է լինել «...զԳարազ ոմն անուն Ի վերայ կուտից, և ղԱրէլ սպասարար և դահարար. և շէնս պարզէն յոցա, յորսց անուն կոչեն. սապէս և նախարարութիւնքն՝ Արեղեանք և Գաբեղեանք»:

² Գ. Բ. Զահուկյան. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լիզվական աղբյուրները.— «Պատմա-բանասիրական հանդես», 1951, էջ 61 (այսուհետև՝ Զհ. 81):

³ A. Perikhanian. Une Inscription arameenne du roi Artases trouvee a Zanguezour (Siwanik).—Revue des etudes armeniennes, N. S., tome III, 1966, p. 18, 22.

Ըստ Ահառյանի, Գարսոյ անվան ծագումն տե՛հալա 1 (ՀԱԲ, 1, 126), Անսովսո անուն է, կա նաև Փարսեցոյ մոտ, սեպուհ՝ Գարեղեան տոհմից:

Խորենացոյ մոտ հայտնվում է և «Արեղսյ տմն, նահապետ Արեղենից տոհմին» (111, 60): Քերես այդ անունով մի անձնավորության ավելի կոչապահեր վերագրելու ասումի նախահոսք զերբ, ըսան աստվածաշնչական Արել անունը կրող մեկին: Ահառյանը (ՀԱԲ, 1, 16) համարում է այդ անունը «Արեղեան տոհմանունիս սարբված» (համա. (2) Գնել և (33) Այուկ):

(37) 1, 31. «Այլ ասեն զսա (Վահագնը—Գ. Ս.) և աստուածացեալ... և սորա ևն զարմըր Վահագնի», և սպա՛ 11, 8. «Բայց յորչոցն Վահագնի զուեալ արս, որը ինքնակամ խնդրեցին զմեհենից պաշտամունս (Վաղարշակը—Գ. Ս.)՝ պատուել մեծապէս, ի ձեռն տալով նոցա զքրմութիւնն»:

Վահագնի անվան ծագման մասին խոսելու ավելորդ համարելով, նշենք, որ ասն այտակոց ասուգարանոց աարք հանգես գտլով, որպէս ասածու կամ աստվածագլայի անուն, եր հեա բերում է ասումին բրմության պաշտոնը, իսկ աւս էլ, իր հերթին, ծնում պատմության մի բանի համապատասխան զբովանդակը, որոնց կանգրաստաններ ստորեւ:

Նշելի է նաև, որ ասումանունը Եղիշեի և Փարսեցոյ մոտ, ի տարբերության Գահահամակի և Խորենացոյ՝ «Վահեունիս» է և ոչ Վահունի, իսկ Վահագնի մեհյանը Աղաթանգեղոսի մոտ կոչվում է «Վահվանեան» (տարբնթերց.՝ Վահվահեան): Քերես, Գահն ամակն է, որ հուշել է Խորենացոյն իր հղացած ասուգարանության համար ավելի հարմար ձև:

(38) 11, 7. «Իսկ զԳա... ի վերայ որոտղ արբունականաց կարդէ (Վաստաշակը—Գ. Ս.): Որոյ սրգի եղեալ Վարժ (տարբնթերց.՝ Վարժ)՝ լանուն նորա անուանի սղզն, բայտ այս զենի, յատուտ Աստաշխիս: Ասաջին սոտում. 1, 12. Կաս Արտաշխիս թոտամըր Վաղարշակալ, սմն Վարժ (տարբնթերց.՝ Վարժ) անուն պատանի լեալ, տջող տրս եղջերուաց և այժեմանց և վարագուց, զիպաձգութեամբ Կեանս կոտլի, զսա ի վեոալ որոտղ արտանականաս կարդե... և ի սմանէ ասեն լինել պատնն Վաստժունիս: Անուհեան, կրկին եկերսր զորում՝ 11, 11. «Բայց (Աստաշխը—Գ. Ս.) տալ զՏեղորան սրգի իր սղպատանի Վարժ անուն... ըսանցի էր պատանին նշտակ ի Էւտաձգութիւն կորովութեան, ուսուցանել զՏիրորան... լանուն նորա կոչի զազգն Վարժունիս»:

Այս մեջբերումները, բացի ասուգարանության երևութից, կոչված են բուսազբել Վարժ-Վարժ տարբնթերտումները, որոնք մասհոդիչ են: «Վաստժ» անուն, բացի Խորենացոյ գեպքիս. հայտնի չէ, ևս Վարագ, այդ թվում է Պատմահոսք մոտ (11, 64): Արդյոք «Վարժ» անունը չէ՞ «վարագից»՝ բարունի որսապետի և «աջող տոտ... վարագուց»-ի կերպատեն անձը հարմատե հետ համար: Բայց նույնը և «Վարժ», որը սերտոտեն սղբումում է «Եկաձգությամբ Կեանց Ետումե». «նշտակ ի նեաձգութիւն ևտոզութեան» արուհաւարություններ հեա: Երևու գեպքում էլ ունենք «խորենուտեան» ստորեւեւեւ, և «թաքնված աստուգարանություն». ուստի և զժվարանում եմ բնաբութուն կատարել, թե կրկուտեղ ս՞ոն է իսկաանս ծառայել Պատմահոսք՝ իս ստուգարանությունն աստգատեւիս (կամ, որոցե, ոչ մեկը):

(39) «Տուտ» ասուգարանոց տարրի մասին՝ որպէս ասուգարանագի, տես այդ անվան տակ (13):

(40) 11, 64. Ղուկիանոս Կեսար թեա զՌոպի զկոյս, զմերձաւոտ կըր, Էմա (Հայոց Տեղորան Վեոսին տրային—Գ. Ս.) ևնութեան. զոր եկեալ ի Հայտ ի բաց Թոզոտ, և պիալ ի նմանէ պատանիս չրս՝ սղգ սեռէ լանուն մոտն իւրեալ: Ռոպիայ Ռոպիանս:

Ահառյանը Ռոպի անունը ծագած է համարում լատինեան Ruia—աշեկս անունից (ՀԱԲ, 1V, 331):

(41) 11, 81. «Իսկ Մամոտն վաղվաղակի զղպարցանէ Բաղատրին. ընդ որ ուրախացեալ Տրգասայ, զրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի զոր

խոստացան, և կարգէ գնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամդոնեան»։ Մյուս դեպքում Խորենացին այս տոհմը անվանում է «Մամիկոնեան», առանց նշելու, ոտ այս ձեր ծագում է «Մամգոնեան»-ից։

«Մամիկոնեան» տոհմանվան ստուգաբանությունն, այսպիսով, եռաստիճան է. «Մամիկոնեանը» ստուգաբանվում է «Մամգոնեանով», սա էլ՝ «Մամգոնով»։ Անանունի տարրերակով այն ստուգաբանված է զույգ՝ Մամիկ և Կոնակ անուններով։ Մամիկ անունը, եթե հետևենք Մարքվարտին, հիշատակում է, դեռևս Տիրոսն Մեծի կապակցությամբ, Ապպիանոսը («Արժ. Միտր., 84, 86)՝ Μαρμαριος (Մանկայոս) ձևով (Մամիկ>Մամկայ՝ սեռ. հւլ., Մամկայոս> Մանկայոս)՝

Աճառյանը (ՀԱԲ, III, 184) Մամգոն անունը համեմատում է չինական Ման-ցուո «հարավային արիական այլազգիների իշխան» կամ gun-Man՝ «իշխան մաների» անունների հետ։

(42) II, 90. «Բայց թագաւորին Տրդատայ մխիթարեալ զգլուխ որդւոցն Կամսարայ զԱրշաւիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ գնա ուրէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանց»։ Այնուհետև, Վրթա-նեսը «յանձն առնէ զաշխարհս Արշաւրի Կամսարականի» (III, 10) և այլն։ «Կամսար» անվան ստուգաբանությունը տե՛ս (11)։

(43) I, 31. «Զարեհ. ի սորա զարմից է որ Զարեհաւանիցն կարդան տղոք»։ Այնուհետև, II, 8. «Սապէս և զԱռաւելեանսն և Զարեհաւանեանսն գաւալ ի զարմից առաջնոց թագաւորացն՝ կարգէ ի նոյնանուանս աւանս»։

Սույն աշխատության մեջ, ինչպես նշվել է սկզբում, մենք տեղանուններից ծագող տոհմանունները, օր. «Մոկացի», «Կորդուացի», «Ակէացի» և այլն, չենք մտքել ստուգաբանությունների շարքը։ Սակայն «Զարեհաւանեան» տոհմանվան պարագան այլ է։ Հետաքրքրական է, որ Խորենացին առաջին հաղորդման մեջ (և ընդհանրապես) առանձին չի հիշատակում տոհմանվան մեջ առկա «Զարեհաւան» քաղաքանունը, տոհմը ծագեցնելով անմիջականորեն Զարեհից։ Երկրորդ հաղորդման մեջ նա միայն ակնարկում է նման մի «ավանի» գոյություն փաստար։ Նույնը և «Առաւելեանների» նկատմամբ, որոնց տոհմանվան հետ կապված որևէ տեղանուն մեզ, սակայն, հայտնի չէ։

Ստուգաբանությունների երկրորդ խմբի երկրորդ ենթախումբն ընդգրկում է այնպիսի անձնանուններ, որոնք ստուգաբանված են նույնպես անձնանուններով։

Դրանք են.

44. Դոմետ—Դոմետիանոս

45. Արգաւան—Արգամ

46. Բազարատ—Բազադիա

47. Աշոտ—Ասուդ

48. Վարազ—Վաղարիա

49. Սմբատ—Շամբատ

50. Յապետոսթէ—Յաբեթ

51. Մերզլի—Դոմետ

52. Սիրաթ—Թիրաս

53. Թակլադ—Թորգոմ

54. Արշամ—Արշամ

(44). II, 54. «Զայս կամելով Երզնի յառասպելոն՝ Դոմետ գոմն առնել կէկալ, որ է ինքն կայսր Դոմետիանոս. ոչ ինքն եկեալ այսր, այլ զհրաման նորա և զգօրս այլաբանելով յանուն նորա կոչեն»։

4 J. Marquart. Eransahr nach der Geographie des P. Moses Chorenaci. Berlin-1901, S. 177.

Այստեղ հառկայես հետաքրքրական է, և այն հանգամանքը, որ Խորենացին իր ստուգարանական համակարգը (աշխարհը) անմիջականորեն կապում է իր աշխարանական, աշխինքն՝ ստուսպեղական, համակարգի (աշխարհի) հետ: Այս մասին մանրամասն կխոսվի ստորև:

(45) 11, 51. «Այս Արգամ է, որ յառառպելին Արգուանն անուանի»: Ասվածից հառվելու է: չ՛ պարզվում ստուգարանության ուղղությունը Հեռեկյով, սակայն, նախորդ օրինակի տրամաբանությունը, զերերը բաշխում ենք այսպես. «Արգուանն»՝ ստուգարանվող տարր, որպես ստուսպելով վիայված անուն, և «Արգամ»՝ ստուգարանող, որպես Խորենացու կողմից ներդրված տարր: Արգամ անունը հիշատակում է միայն Խորենացին (նրան հեռեկյով՝ Ախաանեսը)՝ ԱՃ., ՀԱԲ., 271:

(46—49) 11, 63. «Բայց զիտեա, զի և թողուլ ազգին Բաղրատունեաց զօրինս հարցն՝ Նախ խժական ժառանգելին յարջարջումն—Թիրատ և Սմրատ և այլ աշուպիս կոչմունս, զրկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ բան զուրանայն—Բազազիա, Տուրիա, Սեներիա, Ասուղ, Սափաաիա, Վազարիա, Սնանոս և: Ինձ թուի, թէ որ աշմոյ կոչին Բաղրատունիք Բազաբա՝ Բազազիա է, և Ասուղ՝ Աշտա. զոչնպէս և Վազարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմրատ»: Այստեղ ստուգարանության ուղղությունը պարզ է, Խորենացին ստուգարանում-պարզարանում է իրեն ժամանակակից անվանաձևերը զրանց նախնական անորերով: Հասուկ ուշադրության է արժանի «և Ինձ թուի...» արտահայտությունը, որով Պատմահայրը, ի տարբերություն ստուգարանությունների պահին իրեն բնդհանրապես հասուկ կարուկ պնդումներն, այլալ շարի նկատմամբ չի թարցնում իր սուրջեկարիվ մտակցումը: Այդպիսի ուրիշ զեպրեր էլ կան, և մենք ստորև կանգնազատանք այդ ետևութին:

Քալով թվարկված նախնական անվանաձևերի՝ Մոփոս Խորենացու տեսագաշատ հայտնվելու խնդրին, կարող ենք վիայակոչել միայն Աճառանի մի ետև զիտագություն, թողելով կրակայություններն բնթերողին: «Բրոք որ Բազարատ անվան պր: ձևն է Βαζαράτα» (ՀԱԲ., 1, 354): Մյուսը՝ Շամբատի վերաբերյալ՝ «Իբրև հրեական անուն զիտէ նաև Միխ. Ասորին» (ՀԱԲ., 1V, 137): Մյուս զիտագությունները կրկնում են Խորենացուն:

(5) —(53) 1, 9. «Արդ ի նոյն մասենէ (Մար Աբտս Կատինայի—Գ. Ս.) սկեալ ասացից. Յապետսթէ, Մերոզ (աարընթերց.՝ Մերոզ), Սիրաթ, Բակլազ. որ է Յարեթ, Գոմեր, Թիրատ, Թորգում»: Ստուգարանության ուղղությունն այստեղ ակնհայտ չէ: Խորենացին ներկայացնում է այդ երկու քառյակը որպես զուգահեռ անվանաձևեր, սկզբնապես մատվածաշնչական, մյուսը՝ Մար Աբտսի մատյանից: Սակայն՝ «Յապետսթէ» անունը, բա Խորենացու, կա նաև Թերոսյան Սիրիլյայի հեռեկյով հարգման մեջ. «Յառաջ բան զրուրդն, սաէ, և զբազմարաբատն լենել ձաւնի ազգի մարդկան... Ջրուանն. և Տրատանն և Յապետսթէ լինելին իշխանք երկրի»: Խորենացին անմիջապես ավելացնում է՝ «Որ Ինձ թուին Սևմ, Քամ և Յարեթ» (1, 6):

Այդ «Ինձ թուի»-ն թեևս հուշում է, որ ստուգաբանվող տարուն այստեղ «Յապետսթէն» է. իսկ ստուգարանող-բացատրողը՝ Յաբեթը, և այդ մտեցումը կարելի է մակաբերել նաև վերո թվարկված քառյակի մյուս երեք անվանների վրա, ինչպես և մենք արել ենք ցուցակում:

«Յապետսթէ» ձևը, սկսած Գուաշմիցից, համարվել է թյուրիմացական. հնչյակն և, հավանաբար, է: (Հունարեն Ἰαπετῶν-ից. որտեղ -τῶ մասնիկը կցական շողկապ է ներկայացնում): Մյուս անուններից՝ Մերոզը՝ Գոմերն, ևս «Սիրաթ»՝ Թիրոսի գրաշքություններն են (αυαγραμμα): «Թակլաչի» ծուղումը զժվար է բացատրել:

(54) 11, 24. «Արգամ, որ է Արշամ»: Նախորդի պես այստեղ ստուգարանության ուղղությունն ակնհայտ չէ: Հայտնի է, որ այլալ համատեքստում «Արշամի» ի հայտ գալը արճեստական բնույթ է կրում: Այն ծագում է ասորի

վարքագիր (արուբհայի հիշատակած (Խորենացու մոտ՝ Ղևբուբնայ) ասորական «Արգար Ուկկամա (Ուխխամա)» անվանումից, որ նշանակում է «Ան Արգար», որը նրա շարագրած վարքի հայերեն թարգմանության մեջ հասած տեքստում դարձել է «Աբգար Արշամայ», ծնունդ տալով Արշամ անունով թագավորին⁶։ Այստեղ կարելի է ենթադրություն անել թյուրիմացության ծագման վերաբերյալ։ «Արշամ» անվան մեջ կարելի է տեսնել «արջն» մասնիկը, որ նշանակում է «մութ սե», «թանձր սև» ըստ Ստ. Մալխասյանի (ՀԲԲ, I, 280), և «սև»՝ ըստ Աճառյանի (ՀԱԲ, I, 335)։ Բարդ բառերում այն սովորաբար ներկայանում է յրիվ կազմով (արջնագուն, արջնադուռ և այլն), բայց Աճառյանը տեսնում է այն նաև «արջասպ» բառի մեջ (նույն տեղում), այսինքն, առանց «ն» վերջավորության, ինչը կարելի է ենթադրել նաև «Արշամ(ու)» մականվան մեջ, որը վերածվել է հայրանվան։ Խորենացին, թերևս, ունեցել է երկու տարբերակ և ընտրել է Արշամ անունը որպես սովորական, մանավանդ, որ կա հայոց այդպիսի արքայանուն (Արշամ՝ Մոսկոսի թագավոր՝ մ. թ. ա. II դարի կեսերին)։

Անդրադատնանք այժմ երկրորդ խմբի երրորդ ենթախմբին, որը ամենարևոտագույն է։ Այստեղ հավաքված են անձնանուններով ստուգաբանված անդանունները։ Դրանք նպատակահարմար է բաժանել չորս մասի՝ աշխարհագրական բաղադրով, ցուցադրելու նպատակով։ Առաջին մասը բաղկացած է երկու միավորից, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է ողջ Հայաստանը։

55. Հայք (որպես երկրանուն) — Հայկ

56. Արմէն/Արմէնիկք (երկրանուն) — Արամ

(55) 1, 11. «Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնույն մերոյ Հայկայ՝ Հայք»։

Այս ստուգաբանությունը առկա է և Անանունի մոտ՝ «Իսկ երկիրն ըստ նմին (Հայկի — Գ. Ս.) պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբբ հանդերձ» (էջ 49)։ Այս ձևակերպումը նույնիսկ ավելի հարուստ է, քանի որ երկրանվան հետ մեկտեղ ընդգրկում է և «հայ» յեղանունը։

Որքան մեղ հայտնի է, «հայ» յեղանվան և «Հայկ» անձնանվան կապը բոլորի կողմից բնդունված լինելով հանդերձ, նրանց լեզվաբանական փոխառնությունը դեռևս դիտարկանքներն համոզիչ կերպով բացատրված չէ։

(56) I, 12. «Արամայ բաղում գործք քաջութեան պատմին... և ընդարձակելի զսահմանս Հայոց յամենայն կողմանց. որոյ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպես Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք»։

«Արամ» անձնանվան՝ Խորենացու Պատմության մեջ ներկայանալու հանդամանքները դեռևս բացատրված չեն։ Երևք հնարավոր տարբերակներից՝ ա) ծագում է Աստվածաշնչի Արամ՝ «արամեացիներ» անձնավորված ցեղանունից, բ) Ուրարտուի թագավոր Արամուից և գ) հնագույն հայկական առասպելից, ինչ առավել հավանական է թվում վերջինը։

Գ. Զահուկյանի կարծիքով «Սեբեոսը (Անանունը — Գ. Ս.), ի տարբերություն Խորենացու, «արմեն» անվանումը կապում է ոչ թև «Արամ», այլ «Ար(ա)մանեակ» (Արմենեակ, Արմենակ) անվան հետ»⁷։ Թեև Անանունի մոտ նման ստուգաբանություն չկա, բայց այդպես մտածելու հիմք են տալիս նրա հետևյալ արտահայտությունները. «ազդ Արամենակայ», «սրդիք ազդածինն Արամենակայ» և այլն, ի տարբերություն Խորենացու «Արամազնեայք», «արք Արամեանք», «Արամեան ազն» արտահայտությունների։

⁶ Լորուբնայ գիտնագիր դպրի Եղևտոյ, Թուղթ Արգարու. Վենետիկ, 1868, էջ 4.

⁷ ՏՃ՝ Գ. Խ. Ուրարտու. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 124 և հետ.։

⁸ Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն, նախադրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 286.

Ենթախմբի երկրորդ մասն ընդգրկում է Վանա լճի ավազանի տեղա-
նունները: Գրանք են.

57. Սիմ (լևո)—Սևմ

58. Տարուն (Տարոն)—Տարրան

Մեր հետազոտություններից կլինիլով նպատակահար-
մար է այստեղ գեոսելի նույն տարածքին, այսինքն՝ Վանա լճի ավազանին
վերաբերող վերք և սառիկ հիշատակվող նաև մյուս տեղանունները՝ իրենց
չերիական համարներով: Գրանք են. Հարթ-հարթ (հայեր) (17), Հայք (զաս-
տակիր)-հայք (հայեր) (83), Հայոց ձոր-հայք (հայեր) (84), Գերեզմանք
(Գերեզմանակք)-Բելի հետահարման վայրը (18), Ցրօնք-Սևմի՝ իր որդիների
հետ բաժանվելու վայրը (19): Այսպիսով, սույն տարածքի համար կա ըն-
դամներ յոթ ստուգարանված տեղանուն:

(57) 1, 6. Սևմը, «գիպիայ գաշտի միում փոքու առ երկայնանստի միով
լերամբ, զևսոյ ընդ մէջ նորա անցանելով... անուանէ յանուն իւր զլևառնն
Սիմ»: Աստվածաշնչական Սևմ անունը որնէ մեկնարանություն չի պա-
հանում:

(58) 1, 6. «Բակ ի կրտսերացունից որդուցն նորա (Սևմի—Գ. Ս.) Տար-
րան անուն... բնակէ անդէն ի նոյն գեակղեր, յորոյ անուն և զգաւտն
անուանէ Տարուն (Տարոն)»:

«Տարրան» անունը Աստվածաշնչում չկա, այն նշանվում է միայն Խո-
րենացու մոտ:

Երրորդ մասում ընդգրկված են Արարատյան դաշտի և նրա շրջակա երկ-
րամասերի (Տյուսիս-տրեկլյան Հայաստան) տարածքի տեղանունների ստու-
գարանությունները: Գրանք են.

59. Արտգած—Արամանեակ

60. Արմախր—Արամայիս

61. Երասխ—Երաստ

62. Շիրակ—Շարայ

63. Մասիս—Ամասիա

64. Փառայուս—Փառոխ

65. Յոյակերտ—Յոյակ

66. Գեղ (լևո)—Գեղամ

67. Գեղարբունի (գաւառ)—Գեղամ

68. Գեղարբունի/Գեղամայ ծով—Գեղամ

69. Գեղամի (դաստակերտ)—Գեղամ

70. Գառնի—Գառնիկ

71. Սիւնիք/Սիսական—Սիսակ

72. Արարատ/Արայի դաշտ—Արայ

73. Աղուանք—Աղուս (մականուն)

74. Վայկունիք—Վայկուն

75. Վանանդ—Վուրկամ Վինդ

76. Առշարունիք—Առշաւեր

Նույն կարգով, ինչ որ նախորդ մասի կապակցությամբ, ավելացնենք
այստեղ նաև սույն տարածքի՝ Խորենացու բոստ իմաստե կամ ցեղանվան
ստուգարանած մյուս տեղանունները՝ իրենց ցուցակային համարներով: Գրանք
են. Բառարան-բաղին (20), Մարմետ-«մառ ամատ» (81), Մարայ մարդ-
մարեր (82), Եռուանդավան-վանել (22), Մննդոց-կենդանիների բազմություն
(24): Բնոված ցուցակի հետ միասին ստացվում է 23 տեղանուն:

Այս ցուցակում նեոկալոգիկ անուններից առաջին 15-ը (59—73) Խո-
րենասին ծագեցնում է Արամայակի և նրա սերունդների հետ կապված
ստուգարան-ամանդությունները (Այստեղ չենք խոսում մարաբասյան պրոբ-
լեմե մե): Մենք հակված չենք վիճարկելու, ինչպես որ բազմաթիվ անդամ
արված է առկա դրականություն մեջ, Պատմահոր այս պնդումը, համաձայն-

վելով Գ. Ջահուկյանի այն տեսակետին, որ «Խորենացին այս անունները ոչ թե հորինել է, ինչպես կարծում են որոշ քննադատներ, այլ վերցրել գերազանցապես ժողովրդական ավանդություններից և օտար աղբյուրներից» (Ջահ., 81, էջ 51): Սա ընդհանուր ծանոթագրություն է հաջորդ շարադրանքի համապատասխան մասի համար, որին տեղեկություն կավելացնենք անհրաժեշտ մանրամասներ: Կարևորագույնները գրանցից վերաբերում են Անանունի (Սեբեոսի) մոտ նույն այդ անունների կապակցությամբ առաջարկված ստուգաբանություններին, անկախ այն բանից, թե դրանք համընկնում են Խորենացու առաջարկներին, թե տարբերվում նրանցից: Նշենք, որ վերը «Հայք»-Հայկ և «ԱրմէնյԱրմէնիկք»-Արամ զուգբերի կապակցությամբ Անանունի տվյալները արդեն բերվել են:

(59) 1, 12. «Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամանեկայ՝ շինէլ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէլ դաշտին, և զտուն լերինն ի նոյն կողմանէլ, և զլեւտոնն անտանէլ յանկապոյն իւր անուն Արագած և զկալուածսն՝ ոտն Արագածոյ»:

Նշելի է Խորենացու հատուկ անդրադարձումն իր առաջարկած ստուգաբանության հնչյունալին որակին, («յանկագոյն», այն դեպքում, երբ նմանությունը իրականում չնշեն է):

Անանունը ևս նշում է, որ «Արամենակ բնակէ անդ, և շինէ զբերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ՝ զվայրն լեռնակողմն և առապար» (էջ 50), սակայն այստեղ չի հիշատակում Արագած լեռը, այլ միայն հետագայում (էջ 52) և այլ կապակցությամբ: Անանունի մոտ Արամհնակի հիշատակումների կապակցությամբ տես վերը (56):

(60—62) 1, 12. «Իսկ որդի նորա (Արամանյակի—Գ. Ս.) Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արամաիւր. և զանուն գետոյն յանուն թոռին իւրոյ Երաստայ (տարընթերց.՝ Արասայ)՝ Երասիս: Եւ զորդի իւր զՇարայ, զյոյովածին և զշատակեր, առաքէ ամենայն աղիսիւ իւրով ի զաշտ մի մոտաւոր, արգաւանդ և բերրի... յորոյ անուն և զգաւառն ասեն անուանեալ Շիրակ: Վասն որոյ թուի արդարանալ առասպելին, որ ասի ի մէջ գեղջկաց. «Թէ քո Շարայի որկորն է՝ ասին, մեր Շիրակայ ամբարքն շին»:

«Արամաիւր»-Արամայիս ստուգաբանությունը՝ «Արամաիւր» տեղանվան որոշ փոփոխություններ՝ առկա է և Անանունի մոտ, այն է՝ Արամայիւր-Արամայիս. «Արամայիս շինէ իւր ի վերայ գետեզերն տուն բնակութեան, և անուանէ զանուն նորա ըստ անուան իւրոյ Արամայիւր» (էջ 50):

«Շարայ» անունը Աճառյանը (ՀԱԹ, IV, 150) հարցակոնքով համեմատում է պարսկերեն شارا «շատակեր» բառի հետ:

Եղակի դեպք է, երբ Խորենացին հիմնավորում է իր առաջարկած ստուգաբանությունը գեղջուկներից լսած «առասպելով» (առածով):

(63—65) 11, 12. «Ամասիա (Արամանյակի որդին—Գ. Ս.) բնակեալ յԱրամաիւր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ և յետ Գեղամայ՝ ՎՓառոյս արի և զՅոլակ... և շինէ ...բրկուս տունս... Եւ ետ զնոսա ժառանգութիւն երկուց որդուց իւրոց... յորս բնակեալ յիւրեանց անուն զտեղիսն կոչեցին, ի Փառոյսոյ՝ Փառախոտ, և ի Յոլակայ՝ Յոլակերա: Իայց զլեւտոնն՝ Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս»:

Ամասիա անունը աստվածաշնչական է: Գալով Մասիս անվան ստուգաբանությունը, ապա Անանունը միանգամայն այլ, Ամասիայի հետ կապ չունեցող, տարբերակ է առաջարկում, թեև նրա անունը այլ կապակցությամբ հիշատակվում է: Ըստ Անանունի, Աբրահամի ընդոծին Մարսեակը, փախչելով Իսահակից, «եկեալ բնակեցաւ առ ոտամբ երկուց լերանցն որ հային հանդեպ մեծի դաշտին Արայի, յԱրագած կատարն և ի Գեղ լեռան: Եւ անուանէ զլերինս յանուն իւր, որում Ազատն կոչեն լեռան» (էջ 52): «Ազատն», ինչպես հայտնի է, Մասիսի սովորական ածականն է:

Անանունը ստուգարանում է նաև Փառսիա և Փառակտն տեղանունները՝ Փառսի անձնանվամբ. «Փառսի, նա է Եղիազար, և Փառսիս կոչին գտեղի բնակությունն, և Փառականն՝ զաշտ սրտոց և արշատանաց նսցին» (էջ 52):

Աճառյանը Փառսի անվանը վերադարձում է իրանական ծագում՝ *արցուխ* — «երջանիկ» բառից:

(66—68) I, 12. «Իսկ Գեղամ... զնայ զմիւս յերամբն արեւելեան հիւսիսոյ, յեղր ծովակի միոյ: Շինէ զեղր ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ, և զշինոն՝ Գեղարքունի, սրով կոչի և ծովն»:

Անանունը նույնպես հիշատակում է Գեղամին (էջ 50) և Գեղ լիոր (էջ 52), բայց ստուգարանական կապակցություն մեջ չի դնում:

Խորենացու աղբյուրից երևում է, որ ծովը (խոտքը Ասանա լճի մտոին է) նույնպես անվանվել է Գեղարքունի Այլ տեղերում երկիցս (II, 46 և III, 46) Խորենացին անվանում է այն «Գեղամայ ծով»:

Աճառյանը Գեղամ անվան մասին դրոմ է (ՀԱԲ, I, 452). «Հնից հայտնի է միայն մեկ անգամ, ծագումը՝ կամ իսրայելյան (ուրարտական, տղայես է հակված մասձիլու նաև Ջաշուկյանը, Ջաշ., 81, էջ 54) կամ Գեղամա (ծով, լիոր) տեղանունից»:

(69—70) I, 12. «Բայց ինքն Գեղամ... ի ձորակի միում ամբոջ շինէ ձեռակերտ մի, և կոչէ դանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնիայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի»: Աճառյանը (ՀԱԲ, I, 446) և Ջաշուկյանը (Ջաշ. 81, էջ 55) Գառնիկ անունը համարում են «գառն» բառի փոխարձական ձևը Հմմտ. «գառնուկ»: Գառնին, բոտ ն. Հարությունյանի, ծագում է ուրարտական Գիառնիանի տեղանունից, որ միանգամայն հավանական է⁸:

(71) II, 12. Գեղամի սրգի Սիսակը այնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք, այլ Պարսք յրստակագոյնս ևս Սիսական կոչին»:

Սիսակ անվան ծագումը Աճառյանը (ՀԱԲ, IV, 525) համարում է անհայտ: Ուշադրություն արժանի է Խորենացու դիտողությունը («յրստակագոյնս») «Սիսական» ձևի կապակցությամբ (տես նաև 59):

(72) I, 15. Շամիրամը «Գայ հասանէ տազնապաւ ի զաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ»:

Նույն ստուգաբանությունն առկա է նաև Անանունի մոտ. «Արայն Գեղեցիկ. որով անուն իսկ զաշտին այնորիկ կոչեցաւ յանուն Այրարատ» (էջ 50): Հիշատակում է նաև «գաշտն Արայի» (էջ 51):

«Արայ» անունն, անշուշտ, ծագում է առասպելից:

(73) II, 8. Սիսակի մասին. «և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»: Մականվան հետ կապված ստուգաբանություն տես նաև (15)՝ «Սօսանուեր»:

Սրանով ավարտվում է Արամանյակի և նրա սերունդների դեպի հյուսիս-արևելք տարածվելու մասին առասպել-ավանդության հետ կապված տեղանունների ստուգաբանության շարքը:

(74) II, 14. Տիգրան թագավորի մասին. «Առեալ գերի բազում և ի Հրէից՝ նստի շուրջ Պտղոմայիդ քաղաքաւ Իսկ դշխոյն Հրէից Աղեքսանդրիայ... ինչս բազումս տալով՝ զարձոյց զնա անտի: Քանզի էր լուեալ համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յեղուզակ իսովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կայեալ, որ մինչև ցայժմ յանուն յեղուզակին կոչին Վայկունիք»:

Այս պատմությունը Խորենացին առել է Հովսեփոս Փլավիոսի «Հրեական պատերազմի մասին» գործից, որտեղ կարդում ենք (I, 115, 116). «Իսկ

⁸ Փառականի մասին տե՛ս Պատմութիւն Սերէոսի, ծան. 39.

⁹ Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 62.

Այնքան դրան ... հալոց թագավոր Տիգրանին, որը բանակել էր Պտղոմայիս քաղաքի առջև և պաշարել այնտեղ (փակված) Կլեոպատրային, դաշինքով ու նվերներով հետադարձից Իսկ Տիգրանը Լուկոլլոսի արշավանքների հետևանքով տանն սկսված անկարգությունների պատճառով, վերացնում է պաշարումը և հասնում Հայաստան¹⁰։

(75) II, 6. Անփայտ և վերին Բասեանը սյետոյ վասն հատուածի վզընդուր Բուլղարայ Վնգայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորս անուանեցաւ Վանանգ¹¹։

Սա այդ անձի միակ հիշատակությունն է, և ուղիղ հոլովով նրա ներկայացման բացակայությունը թույլ չի տալիս դատել սղված ձայնավորի մասին՝ ու կամ ի (Վունգ, Վինդ)։

(76) II, 90. «Իսկ Արշաիր (Կոմսարականը—Կ. Ս.) առաւել սիրեալ զպաւռն՝ յիր անուն կոչէ Արշարունիս»։

Ստուգաբանությունը կամ տոհմական է կամ որակականում է ևսորենացուն¹¹։

Տեղանունների՝ անձնանուններով ստուգաբանման շորորդ մասը կազմում են այնպիսիները, որոնք ցրված են Հայկական լեռնաշխարհի տարբեր ծայրերում և նույնիսկ մեկը՝ նրա սահմաններից դուրս։

77. Զարուանդ—Զրուտն

78. Մաժաք—Մշակ

79. Մանեայ այր—Մանի

Ըստ նախորդ օրինակների, այստեղ ևս ավելացնում ենք նույն կարգի, այսինքն՝ ցրված, սակայն բոտ իմաստի ստուգաբանված տեղանունները, որոնք են՝ Բագաւան/Բագնաց աւան-բագին» (21) և Որթք-«որթ» (կողով) (23)։ Ընդամենը հինգ տեղանուն։

(77) I, 6. «Քանդի կողմանք արևելից Զրուտն զՍեմ կոչեն, և Զարուանդ զպաւռն անուանեալ ասեն մինչև ցայժմ»։

Զրվանը, որ իրանական դիցաբանության մեջ ժամանակի և ճակատագրի աստվածն է, որը ծնել է թե՛ Ահուրամադդային՝ բարու, թե՛ Ահրիմանին՝ չարի մարմնացումը, այստեղ նույնացված է աստվածաշնչական նույի որդիներից Սեմի հետ։

(78) I, 14. «Իվ զդաստակերտն, զոր յանուն իր շինեաց Մշակ կողմնապետն Արամայ... անուանէին հինքն աշխարհին Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախոսել»։

Բովական հետաքրքրական է, որ Կոստանդին Միրանածինը պահպանել է նմանօրինակ մի տեղեկություն, այն է՝ «Կեսարիա մայրաքաղաքը, որն իր անունը պարտական է մեծ Հուլիոս Կեսարին, նախապես կոչվում էր Մազակա, կապագոտվկիացիների նախահայր Մոսոխի անունից»¹²։ Նշենք «ոչ կարելով ուղղախոսել» արտահայտությունը՝ որպես ևսորենացուն՝ իր ստուգաբանություններին սոված հազվագյուտ ծանոթություններից մեկը։ Տես և (59 և 71)։

(79) II, 91. «Քանդի էր կին ոմն անուն Մանի, յընկերաց սբբոց Հոփսախմեանց որ... բնակեցաւ ի լերինս յասոսիկ... վասն որոյ կոչեցաւ անուն լերինն Մանեայ ալոք»։

«Մանի» որպես իգական անձնանուն կիրառված է միայն Մովսես ևսորենացու մոտ։

10 Հ ո վ ս և ս յ ո ս ֆ լ տ վ ի ո ս. Թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 35։
11 «Արշաիր» անվան մասին տե՛ս Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հեյլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես ևսորենացին. Երևան, 1966, էջ 125 և այլ։
12 Կոստանդին Միրանածին, Թարգմանությունը ճ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 168 և ծան. 36։

Վերջին, հրրորդ խումբը ամենափոքրն է, այն ընդգրկում է ստուգարանության ընդամենը 5 օրինակ և պարունակում է ըստ ցեղանունների ստուգարանված հասուկ անուններ: Այս խումբը բաժանվում է երկու ենթախմբի (բացակայում են անձանունների ստուգարանություններ): Դրանցից առաջինը նախարարական ընդամենը մեկ տոհմանուն է պարունակում:

80. Մուրացեան—մար (մարացուց տէր)

(80) 11, 8. «Քանզի ոչ սսեն Նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարցուցն տէր»:

Նշելի է, որ Վահնամակի մեղ հասած տեքստում Մուրացեան տոհմանունը ներկայանում է «Մարացեան» տեսքով: Հավանաբար խորհնացին աչքի առաջ է ունեցել նման մի տարրերակ ես և կատարել իր ընտրությունը հօգուտ «Մարացեանի», բանի որ այդպիսի ընթերցումը ճոխ պատմաառասպելական մեկնարանություն հնարավորություն է տալիս, որին մասամբ կծանոթանանք ստորև:

Երկրորդ ենթախումբը պարունակում է չորս տեղանվան ստուգարանություն: Դրանք են՝

81. Մարմէտ—ամար ամատս (պարսկերեն՝ ամարը եկավ)

82. Մարաց մարդ—ամարի մարդ

83. Հայք (դաստակերտ)—հայքս (հայեր)

84. Հայոց ձոր—հայքս (հայեր)

(81) 11, 46. Արաաշեսը, հաստակի դաստակերտն Երուանդայ (Երվանդակերտ—Վ. Ս.) և միարան զոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ ամար ամատս, որ թարգմանի Մարս կին... Յայս ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմէտս: Մենք արդեն ձանոթ ենք խորհնացու ստուգարանական «թարգմանական» մեթոդին Ամատունի տոհմանվան (7) և Կամսար անձնանվան (11) ստուգարանություններից: Այս դեպքը միաժամանակ գրանցում է իր հիմքում ընկած նաև «կրկնակի ստուգարանություն» մեթոդը:

(82) 11, 46. Արաաշեսը անուանեսուց զհոգիտն, ուր ի վերայ զիակացն բանակեցաւն՝ Մարաց մարդս:

«Մարաց մարդս» խորհնացին ստուգարանում է «մար» ցեղանվան միջոցով, առանց, սակայն, այն առանձին հիշատակելու, որը և ավելորդ կլիներ տեղա համատեքստում, ուր խոսվում է նաև «Մարմետի» մասին: Ընդհին այստեղ այլ է: XIII դարի հրեք արձանագրություններում այդ տեղանունը մի զնայրում հիշատակված է խորհնացու ավանդած ձևով, մյուս երկուսում, սակայն, «Մարանց (ալսինքն՝ մայրերի) մարդ»¹⁸, որ ավելի իրատեսական է թվում: Չի բացառվում, որ խորհնացին, ունենալով երկու տարբերակ, ընտրել է իր պատմությունը կերտելու համար հարմարագույնը: (Հմտ. Երուանդավան (22):

(83—84), 12. «Բայց զտեղի ճակատում շինէ դաստակերտ և անուն կոչէ Հայք վասն յաղթութեան պատերազմին: Այնորիկ ազազաւ և դաւառն այժմ անուանի Հայոց ձոր»:

Ի տարրերություն «Հայք» երկրանվան (59), որն բոտ խորհնացու զալիս է «Հայկից», «Հայք» դաստակերտը, ըստ համատեքստի, իր անվանումը ստացել է «հայքս» (հայեր) ցեղանունից, ինչպես և «Հայոց ձորը»:

(Շարունակելի)

¹⁸ ՏՄ՝ Գ. Халатьянц. Армянский эпос в «Истории Армении» Моисея Хоренского. М., 1896, ч. II, с. 233.